ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

ՊԱՏԳԱՄԱՎՈՐ

01 դեկտեմբերի, 2020թ.

Հայաստանի Հանրապետության
Ազգային ժողովի նախագահ
ԱՐԱՐԱՏ ՄԻՐԶՈՅԱՆԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐՆԵՐԻ
ՊԱՀԱՆՋԸ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ ՀՐԱՏԱՊ ԹԵՄԱՅՈՎ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 114-րդ հոդվածը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Կանոնակարգ) 123-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապտության Ազգային ժողովի (այսուհետ՝ Ազգային ժողով) ներքոստորագրյալ պատգամավորներս Ազգային ժողովի նախագահ Արարատ Միրզոյանին խնդրում ենք՝

- Կանոնակարգի 123-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ 2020թ. դեկտեմբերի 08-ին (երեքշաբթի) գումարվող Ազգային ժողովի հերթական նիստերի 3-րդ հիմնական նիստում անցկացնել հասարակական հետաքրքրություն ներկայացնող հրատապ թեմայով քննարկում, որի առարկան է.
- *Հայ ռազմագերիներին և գերեվարված քաղաքացիական անձանց գերությունից վերադարձնելու խնդիրը:*

Հիմնական զեկուցմամբ հանդես կգա սույն պահանջը ներկայացրած պատգամավորների ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի «Լուսավոր Հայաստան» խմբակցության ղեկավար Էդմոն Մարուքյանը:

Կից ներկայացվում է Կանոնակարգի 123-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված ուղերձի նախագիծը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

Պ Ա Տ Գ Ա Մ Ա Վ Ո Ր

Մարուքյան Էդմոն Հրաչիկի	126	ԼՀԿ
Գորգիսյան Գեւորգ Սամվելի	125	ԼՀԿ
Ալեքսանյան Սարգիս Ռոբերտի	123	ԼՀԿ
Այվազյան Հրանտ Գնունու	131	ԼՀԿ
Անդրեասյան Էդվարդ Հրաչի	128	ԼՀԿ
Բաբայան Հարություն Վիլիկի	118	ԼՀԿ
Բաղդասարյան Գուրգեն Նիկոլի	124	ԼՀԿ
Գրիգորյան Սրբուհի Էդիկի	122	ԼՀԿ
Եղիազարյան Արմեն Էդիկի	119	ԼՀԿ
Խաչատրյան Արկադի Սանասարի	116	ԼՀԿ
Կոստանյան Աննա Մայիսի	120	ԼՀԿ
Մինասյան Սարիկ Սամվելի	132	ԼՀԿ
Սամսոնյան Անի Տաճատի	117	ԼՀԿ
Սիմոնյան Կարեն Մանվելի	121	ԼՀԿ
Սիմոնյան Տարոն Վարդանի	130	ԼՀԿ
Ստեփանյան Ռուբիկ Շահումի	129	ԼՀԿ
Ստեփանյան Ստեփան Սամվելի	127	ԼՀԿ

1. [illegible]	[illegible]		093
2. [illegible]	[illegible]		090
3. [illegible]	[illegible]		094
4. [illegible]	[illegible]		114
5. [illegible]	[illegible]		106
6. [illegible]	[illegible]		100
7. [illegible]	[illegible]		098
8. [illegible]	[illegible]		095.
9. [illegible]	[illegible]		104
10. [illegible]	[illegible]		101
11. [illegible]	[illegible]		103
12. [illegible]	[illegible]		105
13. [illegible]	[illegible]		096
14. [illegible]	[illegible]		109
15. [illegible]	[illegible]		113
16. [illegible]	[illegible]		112.
17. [illegible]	[illegible]		107
18. [illegible]	[illegible]		099

19. Дмитр Митицуши 110

20. Дмитриев Гиппократович 111

21. Петров Пантелеевич 108

22. Петр Федорович 091

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՈՒՂԵՐՁ

Հիմնվելով ՄԱԿ-ի 1948թ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի, Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին 1949թ-ի Ժնևյան կոնվենցիայի, Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին 1949թ-ի Ժնևյան կոնվենցիայի, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին 1950թ-ի եվրոպական կոնվենցիայի, Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման 1965թ-ի միջազգային կոնվենցիայի և Մարդու իրավունքների ու մարդասիրական իրավունքի նորմեր սահմանող այլ միջազգային պայմանագրերի, միջազգային սովորութային իրավունքի, քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված միջազգային իրավունքի սկզբունքների վրա,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հայկական և ադրբեջանական կողմերը Ռուսաստանի Դաշնության միջնորդությամբ պայմանավորվել են փոխանակել 2020թ-ի սեպտեմբերի 27-ից մինչև նոյեմբերի 10-ը ռազմական գործողությունների ընթացքում, ինչպես նաև դրանից հետո գերության մեջ հայտնված անձանց և դիերը,

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ադրբեջանի Հանրապետությունն արհեստականորեն ձգձգում է գերիների ու դիերի փոխանակման գործընթացը, ակնհայտորեն չի ընդունում իր իշխանության տակ հայտնված ռազմագերիների և ազատազրկված քաղաքացիական անձանց իրական քանակը, թաքցնում նրանց իրական քանակը, շարունակում դաժան վերաբերմունքը, ֆիզիկական և հոգեբանական խոշտանգումները, ավելին՝ իր զինված ուժերի առանձին ներկայացուցիչների միջոցով տեսագրում այդ ամենը և տարածում սոցիալական ցանցերում և մեդիայում.

Հաշվի առնելով Ադրբեջանի իշխանությունների նպատակամղված, կազմակերպված և համակարգված քաղաքականությունը՝ ուղղված էթնիկ հայերի նկատմամբ ատելություն և թշնամանք բորբոքելուն, աշխարհի տարբեր մասերում հայերին սպանելու, խոշտանգելու գործում դեր ունեցած անձանց հերոսացնելուն՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՆ
ՈՒՂԵՐՁՈՎ ԴԻՄՈՒՄ Է

Միջազգային հանրությանը՝ ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդին, ՄԱԿ-ի խոշտանգումների դեմ կոմիտեին և Խոշտանգումների կանխման ենթակոմիտեին, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարին, Ռասայական

խտրականության վերացման կոմիտեին, Եվրոպայի անվտանգության և համագործակցության կոմիտեին, ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներին, ԵԱՀԿ Մինսկի խմբին, Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարին, Խոշտանգումների կանխման եվրոպական կոմիտեին, Կարմիր խաչի միջազգային կոմիտեին և Մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող այլ միջազգային ու ազգային կազմակերպություններին, կառույցներին և անձնաց,

ԿՈՉ ԵՆՔ ԱՆՈՒՄ

- ավելացնել ճնշումը Ադրբեջանի Հանրապետության նկատմամբ՝ Մարդու իրավունքների և մարդասիրական իրավունքի միջազգային փաստաթղթերով, սովորութային իրավունքով և քաղաքակիրթ ազգերի կողմից ճանաչված սկզբունքներով ստանձնված միջազգային պարտավորությունների հարգման և կատարման ուղղությամբ,
- ստիպել Ադրբեջանի Հանրապետությանը դադարեցնել խոշտանգումները, անմարդկային և դաժան վերաբերմունքը հայ ռազմագերիների և ազատազրկված քաղաքացիական անձանց նկատմամբ,
- ստիպել Ադրբեջանի Հանրապետությանը հայկական կողմին անհապաղ հանձնել իրենց իշխանության ներքո գտնվող հայ ռազմագերիներին, քաղաքացիական բնակչությանը,
- ստիպել Ադրբեջանի Հանրապետությանը դադարեցնել ռասայական խտրականությամբ պայմանավորված հայատյացության քաղաքականությունը հանրային կյանքի բոլոր ոլորտներում՝ դպրոցներում, ուսումնական հաստատություններում, հասարակական, ռազմական և քաղաքական գործիչների հանրային հայտարարություններում, սոցիալական ցանցերում, մեդիայում, ինչպես նաև հայատյացության պետական քաղաքականության ցանկացած այլ դրսևորման մեջ,
- առավելագույն ջանքերով ու իրական քայլերով դադարեցնել քաղաքակիրթ աշխարհի համար ամոթալի, ռասսայական խտրականությամբ պայմանավորված Ադրբեջանի Հանրապետության հայատյաց քաղաքականությունը, այդ թվում՝ վերջինիս կողմից Մարդու իրավունքների ու արժանապատվության ակնհայտ ոտնահարման, պատերազմական հանցագործությունների, դաժան ու անմարդկային վերաբերմունքի և ստանձնված միջազգային պարտավորություններից ամեն կերպ խուսափելու անսանձ քաղաքականությունը: